USDA Food and Nutrition Service
U.S. DEPARTMENT OF AGRICULTURE

Ինչպես դիմել անվճար և իջեցված գներով դպրոցական սննդի համար

Հետևեք այս հրահանգներին, որոնք կօգնեն ձեզ լրացնել անվճար և իջեցված գներով դպրոցական սննդի համար դիմումը: Դուք պետք է միայն մեկ դիմում ներկայացնեք յուրաքանչյուր տնային տնտեսության համար, **նույնիսկ եթե ձեր երեխաները մեկից ավելի դպրոցներ են հաճախում [Insert School District here].** **-ում:**

Որպեսզի որոշվի անվճար կամ իջեցված գներով դպրոցական սնունդ ստանալու ձեր երեխայի (երեխաների) իրավունքը, դիմումը պետք է ամբողջությամբ լրացվի: Հետևեք այս հրահանգների հերթականությանը: Հրահանգների յուրաքանչյուր քայլ համապատասխանում է ձեր դիմումի քայլերին: Եթե որևէ պահի համոզված չլինեք, թե ինչ է պետք անել, կապվեք ի հետ: [Insert School/School District contact here; phone and email preferred].

Դիմումը լրացնելու համար օգտագործեք գրիչ (ոչ մատիտ) և հնարավորինս հստակ գրեք:

Քայլ 1. Թվարկեք <u>ԲՈԼՈՐ</u> երեխաներին, նորածիններին և աշակերտներին՝ մինչև 12-րդ դասարանը ներառյալ			
Հայտնեք, թե քանի նորածին/մանուկ, դպրոց չհաճախող երեխա և տարրական/միջին/ավագ դպրոցի աշակերտներ են ապրում ձեր տնային տնտեսությունում: Պարտադիր ՉԷ, որ նրանք ձեզ հետ ազգակցական կապ ունենան, որպեսզի ձեր տնային տնտեսության մաս համարվեն: **Ո՞ւմ պետք է նշեմ այստեղ:** Այս բաժինը լրացնելիս խնդրում ենք ներառել ձեր տնային տնտեսության ԲՈԼՈՐ անդամներին, ովքեր. • Մինչև 18 տարեկան երեխաներ են ԵՎ աջակցություն են ստանում տնային տնտեսության եկամտից, • Գտնվում են ձեր խնամքի ներքո՝ ըստ դատարանի կամ պետական/տեղական գործակալության միջոցով հաստատված խնամատարության պաշտոնական համաձայնության, կամ հանդիսանում են անօթևան, ներգաղթյալ կամ տնից փախած երեխա, • հաճախող երեխաներ են (<u>անկախ տարիքից</u>): [Insert School/School system here].			
Ա) Նշեք յուրաքանչյուր երեխայի անունը: Տպագիր գրեք յուրաքանչյուր երեխայի անունը: Յուրաքանչյուր երեխայի համար օգտագործեք դիմումի մեկ տող: Անունները գրելիս յուրաքանչյուր վանդակում գրեք մեկ տառ: Դադարեցրեք գրելը, եթե ազատ տարածքը սպառվի: Եթե կան ավելի շատ երեխաներ, քան	**Բ) Երեխան աշակե՞րտ է:** Եթե «Այո», ապա աջ կողմի «Դասարան» սյունակում գրեք աշակերտի դասարանը:	**Գ) Ունե՞ք *<u>foster children</u>*:** Եթե նշված երեխաներից որևէ մեկը *<u>foster child</u>* է, ապա նշում կատարեք «*Foster Child*» վանդակում՝ երեխայի անունի մոտ: Եթե դիմում եք ՄԻԱՅՆ *<u>foster children</u>*-ի համար, **Քայլ 1**-ն ավարտելուց հետո անցեք **Քայլ 4**-ին: *<u>Foster children</u>*-ը, ովքեր ապրում են ձեզ հետ, <u>կարող են համարվել ձեր տնային տնտեսության անդամ և պետք է նշված լինեն դիմումի մեջ</u>: Եթե դիմում եք թե՛ *foster*, և թե՛	**Դ) Կա՞ն անօթևան, ներգաղթյալ կամ տնից փախած երեխաներ:** Եթե կարծում եք, որ այս բաժնում նշված որևէ երեխա համապատասխանում է այս նկարագրությանը, նշեք «Անօթևան, ներգաղթյալ կամ տնից փախած» վանդակը՝ երեխայի անունի մոտ, և <u>լրացրեք դիմումի բոլոր քայլերը</u>: Անօթևան, ներգաղթյալ կամ տնից փախած <u>կարգավիճակը պետք է հաստատվի</u> ծրագրի համապատասխան անձնակազմի կողմից: Եթե դպրոցական շրջանը չի կարող հաստատել ձեր

դիմումի տողեր, կցեք երկրորդ թերթ (կամ երկրորդ դիմում, եթե լրացնում եք էլեկտրոնային եղանակով)՝ ներառելով լրացուցիչ երեխաների բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Դա վերաբերում է նաև չափահասներին առնչվող Քայլ 3-ին: «MI»-ը միջին անվան (middle initial) սկզբնատառի կարճ տարբերակն է: Վանդակում նշեք յուրաքանչյուր երեխայի միջին անվան առաջին տառը:		*non-foster children*-ի համար, անցեք Քայլ 3-ին: Նշում. որդեգրված երեխաները չեն համարվում *foster children*: *Foster Child*-ն անչափահաս երեխա է, որը վերցվել է պետական խնամակալության ներքո, և որի խնամքը հանձնարարվել է պետության կողմից արտոնագրված չափահաս անձին, որը խնամում է երեխային՝ իր ծնողի կամ խնամակալի փոխարեն:	աշակերտի՝ անօթևան, ներգաղթյալ կամ տնից փախած կարգավիճակը, ապա դպրոցական շրջանը կկապվի ձեզ հետ՝ եկամտի վրա հիմնված դիմում լրացնելու համար: Դուք կարող եք եկամտի մասին տեղեկատվություն տրամադրել հիմա, որպեսզի դպրոցական շրջանը հետագայում հավանականորեն կարիք չունենա կապ հաստատել ձեզ հետ:

Քայլ 2. Տնային տնտեսության անդամներից որևէ մեկը ներկայումս մասնակցո՞ւմ է SNAP-ին, TANF-ին կամ FDPIR-ին

Եթե ձեր տնային տնտեսության անդամներից որևէ մեկը (ներառյալ ձեզ) ներկայումս մասնակցում է ստորև նշված օգնության ծրագրերից մեկին կամ մի քանիսին, ապա ձեր երեխաները կարող են անվճար դպրոցական սնունդ ստանալ.

- Լրացուցիչ սնուցման աջակցության ծրագիր (Supplemental Nutrition Assistance Program, SNAP), կամ [Insert State SNAP here].
- Կարիքավոր ընտանիքների ժամանակավոր աջակցություն (Temporary Assistance for Needy Families, TANF), կամ [Insert State TANF here].
- Սննդի բաշխման ծրագիր հնդկացիների ռեզերվացիաներում (Food Distribution Program on Indian Reservations, FDPIR):

A) Եթե ձեր տնային տնտեսությունում ոչ մեկը չի մասնակցում վերը նշված ծրագրերից որևէ մեկին. • Նշեք «Ոչ» **Քայլ 2-ում** և անցեք **Քայլ 3-ին:**	**B) Եթե ձեր տնային տնտեսությունում որևէ մեկը մասնակցում է վերը նշված ծրագրերից որևէ մեկին.** • Գրեք SNAP-ի, TANF-ի կամ FDPIR-ի գործի համարը: Դուք պետք է տրամադրեք միայն մեկ գործի համար: Եթե մասնակցում եք այս ծրագրերից որևէ մեկին և չգիտեք ձեր գործի համարը, կապվեք. [Insert State/local agency contacts here]. • Անցեք **Քայլ 4-ին**:

Քայլ 3. Թվարկեք տնային տնտեսության ԲՈԼՈՐ անդամներին և յուրաքանչյուր անդամի եկամուտը

Ինչպե՞ս հաղորդել եկամուտը

- Օգտվեք ձեր դիմումի հետնամասում գտնվող **«Եկամտի աղբյուրներ»** և **«Երեխաների եկամտի օրինակներ»** ցանկերից, որպեսզի որոշեք, թե արդյոք ձեր տնային տնտեսությունն ունի հաղորդման ենթակա եկամուտ:
- Նշեք բոլոր գումարները ՄԻԱՅՆ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻ տեսքով: Ողջ եկամուտը հաղորդեք ամբողջական դոլարով: Մի ներառեք ցենտերը:
  - Համախառն եկամուտը ստացված ողջ եկամուտն է՝ **նախքան** հարկերն ու պահումները:
  - Շատերը եկամուտ են համարում այն գումարը, որը «տուն են տանում», այլ ոչ թե ընդհանուր, «համախառն» գումարը: Համոզվեք, որ այն եկամուտը, որը հաղորդում եք այս դիմումի մեջ, ՉԻ կրճատվել՝ հարկերը, ապահովագրավճարները կամ ձեր աշխատավարձից հանվող այլ գումարները վճարելու համար:
- Գրեք «0» ցանկացած դաշտում, որտեղ հաղորդելու ենթակա եկամուտ չկա: Չգրված կամ դատարկ թողնված եկամտի դաշտերը նույնպես կհաշվվեն որպես զրո: Եթե գրում եք «0» կամ դատարկ եք թողնում որևէ դաշտ, ապա հաստատում (հավաստում) եք, որ հաղորդման ենթակա եկամուտ չկա: Եթե տեղական պաշտոնյաները կասկածեն, որ ձեր տնային տնտեսության եկամուտը սխալ է հաղորդվել, ապա ձեր դիմումը կհետաքննվի:
- Նշեք, թե որքան հաճախ է ստացվում եկամտի յուրաքանչյուր տեսակը՝ նշում կատարելով յուրաքանչյուր դաշտի աջ կողմում գտնվող վանդակներում:

3.A Հաղորդեք չափահասների կողմից ստացվող եկամուտը

Ո՞ւմ պետք է նշեմ այստեղ:

- Այս բաժինը լրացնելիս ներառեք ձեր տնային տնտեսության ԲՈԼՈՐ չափահաս անդամներին, ովքեր ապրում են ձեզ հետ և կիսում են եկամուտներն ու ծախսերը, նույնիսկ եթե նրանք ազգակցական կապ չունեն ձեզ հետ և չեն ստանում իրենց սեփական եկամուտը:
- ***ՄԻ ներառեք.***
  - Այն անձանց, ովքեր ապրում են ձեզ հետ, բայց աջակցություն չեն ստանում ձեր տնային տնտեսության եկամտից, ԵՎ եկամուտ չեն ապահովում ձեր տնային տնտեսության համար:
  - **Քայլ 1-ում** արդեն նշված երեխաներին, նորածիններին և աշակերտներին:

1) Նշեք տնային տնտեսության չափահաս անդամների անունները:

Տպագիր գրեք տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի անունը «Տնային տնտեսության չափահաս անդամների անունները (անուն և ազգանուն)» վանդակներում: Ներառեք քոլեջի ուսանողներին, եթե նրանց հարկերը առանձին չեն հայտարարագրվում (քոլեջի բոլոր ուսանողները համարվում են չափահաս): Մի նշեք **Քայլ 1-ում** արդեն նշված տնային տնտեսության անդամներին:

2) Նշեք աշխատանքից ստացված եկամուտը:

Նշեք աշխատանքից ստացված ողջ եկամուտը դիմումի՝ «Եկամուտ աշխատանքից» դաշտում: Այն սովորաբար ներառում է տարբեր աշխատատեղերում աշխատելու արդյունքում ստացված գումարը: Եթե դուք անհատ ձեռներեց եք կամ ֆերմայի սեփականատեր, պետք է հաղորդեք ձեր զուտ եկամուտը: Զուտ եկամուտը այն եկամուտն է, որը մնում է հարկերն ու պահումները հանելուց հետո:

- ***Ի՞նչ անել, եթե ես մի քանի աշխատանք ունեմ:*** Յուրաքանչյուր աշխատանք նշեք առանձին՝ նոր տողում մուտքագրելով ձեր անունը և յուրաքանչյուր աշխատանքից ստացված եկամուտը: Անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ թերթ ավելացրեք:
- ***Ի՞նչ անել, եթե ես անհատ ձեռներեց եմ (ինքնազբաղվածություն):*** Նշեք ձեր բիզնեսից ստացված եկամտի զուտ գումարը: Զուտ գումարը հաշվարկվում է՝ ձեր բիզնեսի համախառն մուտքերից (հասույթից) հանելով նրա ընդհանուր գործառնական ծախսերը: Համախառն մուտքերը կամ հասույթը ողջ եկամուտն է, որն ստացվել է առաջարկվող ապրանքների կամ ծառայությունների վաճառքից:

Եթե **Քայլ 1-ում** նշված երեխան եկամուտ ունի, հետևեք **Քայլ 3. Մաս Բ-ում** նշված հրահանգներին:

Քայլ 3. Թվարկեք տնային տնտեսության ԲՈԼՈՐ անդամներին և յուրաքանչյուր անդամի եկամուտը

3) Նշեք պետական օգնությունից/երեխայի աջակցությունից/ալիմենտից ստացված եկամուտը:
Դիմումի «Պետական օգնություն/երեխայի աջակցություն/ալիմենտ» դաշտում նշեք բոլոր կիրառելի եկամուտները: Մի հաղորդեք աղյուսակում ՉՆՇՎԱԾ պետական աջակցության ցանկացած նպաստների դրամային արժեքը: Եթե եկամուտը ստացվում է երեխայի աջակցության կամ ալիմենտի հաշվին, ապա հաղորդեք միայն դատարանի որոշմամբ կատարվող վճարումները: Ոչ պաշտոնական, բայց կանոնավոր վճարումները պետք է հաղորդվեն որպես «Այլ» եկամուտ հաջորդ բաժնում:

4) Նշեք եկամուտը կենսաթոշակներից/պաշտոնաթողությունից/եկամտի այլ աղբյուրներից:
Դիմումի «Կենսաթոշակներ/պաշտոնաթողություն/եկամտի այլ աղբյուրներ» դաշտում նշեք բոլոր կիրառելի եկամուտները:

- ***Ի՞նչ անել, եթե եկամուտ եմ ստանում այս կատեգորիայի մի քանի աղբյուրներից:*** Յուրաքանչյուր աղբյուր նշեք առանձին՝ նոր տողում մուտքագրելով ձեր անունը և յուրաքանչյուր աղբյուրից ստացված եկամուտը: Անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ թերթ ավելացրեք:

5) Նշեք տնային տնտեսության ընդհանուր չափը:
«Ընդհանուր տնային տնտեսության անդամներ (երեխաներ և չափահասներ)» դաշտում մուտքագրեք տնային տնտեսության անդամների ընդհանուր թիվը: Այս թիվը ՊԵՏՔ է հավասար լինի **Քայլ 1-ում** և **Քայլ 3-ում** նշված տնային տնտեսության անդամների թվին: Եթե կան ձեր տնային տնտեսության որոշ անդամներ, որոնց չեք նշել դիմումի մեջ, վերադարձեք և ավելացրեք նրանց: Շատ կարևոր է նշել տնային տնտեսության բոլոր անդամներին, քանի որ ձեր տնային տնտեսության չափը ազդում է անվճար և իջեցված գներով սնունդ ստանալու ձեր իրավունքի վրա:

6) Տրամադրեք ձեր Սոցիալական ապահովության համարի վերջին չորս նիշերը:
Հատկացված տարածքում տնային տնտեսության չափահաս անդամը պետք է մուտքագրի իր Սոցիալական ապահովության համարի վերջին չորս նիշերը: Դուք իրավունք ունեք դիմել նպաստների համար, նույնիսկ եթե չունեք Սոցիալական ապահովության համար: Եթե տնային տնտեսության ոչ մի չափահաս անդամ չունի Սոցիալական ապահովության համար, ապա դատարկ թողեք այդ տարածքը և նշեք աջում գտնվող վանդակը՝ «Նշել, եթե առկա չէ Սոցիալական ապահովության համար»:

3.B Նշեք երեխաների կողմից ստացված եկամուտը

Նշեք երեխաների կողմից վաստակված կամ ստացված ողջ եկամուտը:
«Երեխայի եկամուտ» վանդակում նշեք **Քայլ 1-ում** թվարկված ձեր տնային տնտեսության ԲՈԼՈՐ երեխաների համակցված համախառն եկամուտը: Հաշվեք *foster children*-ի եկամուտը միայն այն դեպքում, եթե նրանց համար դիմում եք ձեր տնային տնտեսության մնացած անդամների հետ միասին:

- ***Ի՞նչ է երեխայի եկամուտը:*** Երեխայի եկամուտը ձեր տնային տնտեսությունից դուրս ստացված գումարն է, որն ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ վճարվում է ձեր երեխաներին: Շատ տնային տնտեսություններ երեխայի եկամուտ չեն ստանում:

Քայլ 4. Կոնտակտային տվյալներ և չափահասի ստորագրություն		
Բոլոր դիմումները պետք է ստորագրվեն տնային տնտեսության չափահաս անդամի կողմից: Ստորագրելով դիմումը՝ տնային տնտեսության այդ անդամը հաստատում է, որ բոլոր տեղեկությունները ներկայացվել են ճշգրիտ և ամբողջությամբ: Նախքան այս բաժինը լրացնելը՝ նաև համոզվեք, որ կարդացել եք դիմումի հետնամասում նշված հայտարարությունները:		
Ա) Տրամադրեք ձեր կոնտակտային տվյալները: Գրեք ձեր ընթացիկ փոստային հասցեն տրամադրված դաշտերում, եթե այդ տեղեկատվությունը հասանելի է: Եթե մշտական հասցե չունեք, խնդիր չկա: Հեռախոսահամար, էլ. հասցե կամ դրանք երկուսն էլ տրամադրելը պարտադիր չէ, բայց կօգնի մեզ արագ կապվել ձեզ հետ, եթե անհրաժեշտություն լինի:	**Բ) Տպագիր գրեք ձեր անունը, ստորագրեք և նշեք այսօրվա ամսաթիվը:** Տպագիր գրեք դիմումը ստորագրող չափահասի անունը, իսկ այդ անձը պետք է ստորագրի «Չափահասի ստորագրություն» վանդակում:	**Գ) Լրացված դիմումը ուղարկեք հետևյալ հասցեին՝** Insert School/District address here
Կամընտրական		
Հայտնեք երեխաների ռասայական և էթնիկ պատկանելությունը (ըստ ցանկության): Դիմումի հետնամասում խնդրում ենք տեղեկություններ տրամադրել ձեր երեխաների ռասայական և էթնիկ պատկանելության մասին: Այս դաշտը կամընտրական է և չի ազդում ձեր երեխաների՝ անվճար կամ իջեցված գներով դպրոցական սնունդ ստանալու իրավունքի վրա: Այս տեղեկատվությունը պահանջվում է բացառապես քաղաքացիական իրավունքների մասին դաշնային օրենքներին նահանգի համապատասխանությունը որոշելու նպատակով, և ձեր պատասխանը չի ազդի ձեր դիմումի վերնայման վրա և կարող է պաշտպանված լինել Գաղտնիության մասին ակտով: Տրամադրելով այս տեղեկատվությունը՝ դուք մեզ կօգնեք համոզվել, որ այս ծրագիրը կառավարվում է ոչ խտրական ձևով:		

Խնդրում ենք վերադարձնել դիմումը ուղղակիորեն ձեր երեխայի ԴՊՐՈՑ: Լրացված դիմումները կամ դիմումների մասին հարցերը <u>ՄԻ</u> ուղարկեք փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտի (US Department of Agriculture, USDA) Քաղաքացիական իրավունքների քարտուղարի օգնականի գրասենյակ, հակառակ դեպքում ձեր երեխայի՝ անվճար կամ իջեցված գներով սնունդ ստանալու իրավունքը տրամադրումը կհետաձգվի: